ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ 13.05.2011թ.

Նախագահում էր մարզպետ Ն. Պողոսյանը, մասնակցում էր մարզի խորհրդի 92 անդամներից 84-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Ղուկասյանը, Գ. Ստեփանյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, զինվորական կոմիսարներ, մարզային ենթակայության առողջապահական ընկերությունների տնօրեններ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մարզում 2011 թվականի գարնանային զորակոչի անցկացման կազմակերպման մասին:
   /Զեկ. Խ. Սուչյան – Գավառի զինկոմ/

2. 2011 թվականի մայիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեների կատարման, սեփական եկամուտների ցուցանիշների ապահովման, նախորդ տարիների կուտակված աշխատավարձերի և սոցվճարների մասին:
   /Զեկ. Ա. Սահակյան – ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչության պետ/

3. Մարզի բնակչության բուժսպասարկման որակի բարելավման և ընտանեկան նպաստի համակարգում բնակչության փաստագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Ա. Մելքոնյան – առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/

4. Մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների մասին:
   /Զեկ. Վ. Հովհաննիսյան – գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Արտահայտվեցին՝

Վ. Բազիկյանը - մարզպետի օգնական

Հ. Բադալյանը - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Գավառի տարածքային ծառայության պետ,

Ս. Սիմոնյանը - ԲԻ ԲԻ ՋԻ տնօրեն

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ն. Պողոսյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել համայնքի ղեկավարի որոշումը համայնքում զորահավաքային մարմին ստեղծելու մասին.

2) լրջորեն աջակցել զորակոչին և խստորեն կատարել զորակոչիկների հաշվառումը համայնքում.

3) ուշադրության կենտրոնում պահել համայնքում և հանրապետական նշանակության ճանապարհներին կից տարածքների մաքրման և աղբահանության աշխատանքները.

4) աջակցել համայնքի գյուղացիական տնտեսություններին գարնան գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը և հսկողություն սահմանել, որ համապատասխան սուբյեկտներին բաժանված սերմացուի մշակման արդյունքում աշնանը վերարտադրված սերմացուն բաժանվի միայն մարզի անհատական և գյուղացիական տնտեսություններին.

5) մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել շախմատի իմացությամբ, անկախ կրթությունից, անձանց տվյալները մարզի հանրակրթական հաստատություններում 2011-2012 ուս.տարվանից ,,Շախմատ,, առարկան դասավանդելու համար.

6) ապահովել համայնքի մասնակցությունը մարզում անցկացվող ՀՀ Նախագահի մրցանակի համար ,,Լավագույն մարզական ընտանիք,, մրցույթին.

7) ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի Գեղարքունիքի մարզային գործակալություն ներկայացնել գյուղատնտեսության համատարած հաշվառման հստակ ցուցանիշներ.

8) 2011թ. հոկտեմբերի 12-ից սկսվող մարդահամարի հետ կապված ձևաթղթերը ժամանակին և ճշգրիտ լրացնել և ներկայացնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի Գեղարքունիքի մարզային գործակալություն.

9) ուշադրության կենտրոնում պահել համայնքի յուրաքանչյուր ամսվա կտրվածքով համամասնական բյուջեի կատարումը և յուրաքանչյուր 10 օրը մեկ ներկայացնել տեղեկատվություն բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մասին:

2. Մարզի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների պետերին՝ ուշադրության կենտրոնում պահել ընտանեկան նպաստի սխալ վճարված գումարը հետ գանձելու գործընթացը և յուրաքանչյուր ամիս ներկայացնել տեղեկատվություն:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ